

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության և Բելառուսի Հանրապետության
արդարադատության նախարարության միջև համագործակցության
մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարությունը և Բելառուսի Հանրապետության
արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ընդունելով երկու երկրների արդարադատության
նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը,
հաշվի առնելով երկու երկրների միջև գիտական,
տեխնիկական, մշակութային և իրավական համագործակցության
դրական փորձը,

երկու պետությունների արդարադատության մարմինների և
հիմնարկների միջև գործընկերային կապեր հաստատելու համար,
հայ և բելառուս իրավաբանների միջև փոխըմբռնման և
բարեկամական համագործակցության հետագա ամրապնդման
նպատակներով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կազմակերպում են երկկողմ գիտաժողովներ,
համաժողովներ և սեմինարներ իրավաբանական գիտության և
պրակտիկայի տարբեր խնդիրներով: Կողմերը կանոնավոր կերպով
բանակցություններ և խորհրդատվություններ կանցկացնեն
փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմ
համագործակցության, տարածաշրջանային և միջազգային
հարցերով: Սույն Համաձայնագրով նախատեսված Կողմերի
համագործակցության շրջանակներում հանդիպումները կարող են
անցկացվել Կողմերի արդարադատության նախարարների,
նախարարների տեղակալների կամ վարչության պետերի, ինչպես
նաև մասնագետների միջև: Կողմերը փոխադարձության
հիմունքներով կսահմանեն հանդիպումների օրակարգը,
ժամկետները և վայրը, բանակցությունների և
խորհրդատվությունների մակարդակը:

Կողմերը սույն Համաձայնագրի շրջանակներում
փոխադարձության հիմունքներով միմյանց կաջակցեն կադրերի
պատրաստման գործում:

Հոդված 2

Ազգային օրենսդրությունը միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով Կողմերն իրականացնում են ՄԱԿ-ի շրջանակներում կնքված միջազգային կոնվենցիաների, իրավական օգնության մասին և իրավական բնագավառի այլ միջազգային պայմանագրերի /որոնց մասնակից են հանդիսանում Կողմերի պետությունները/ իրագործման աշխատանքի փորձի փոխանակում՝ կառավարման այն պետական մարմինների, դատական մարմինների, ինչպես նաև արդարադատության հիմնարկների և վերը նշված միջազգային պայմանագրերի իրագործման հետ կապված հարցերին մասնակցող այլ մարմինների գործունեությանը ծանոթանալու համար իրենց մասնագետներին փոխադարձաբար ուղարկելու միջոցով:

Ընթացիկ հարցերը Կողմերը լուծում են փոխադարձ խորհրդատվությունների կամ այլ՝ հատուկ պայմանավորված միջոցներով:

Հոդված 3

Ղատական համակարգի, դատարանների գործունեության կազմակերպման հարցերի, ինչպես նաև դատական արակտիկայի և վիճակագրության ուսումնասիրման նպատակով Կողմերն իրենց մասնագետների և դատական մարմինների աշխատողների մասնակցությամբ և իրենց իրավասությունների սահմաններում կազմակերպում և անցկացնում են համատեղ միջոցառումներ, որոնց ընթացքում իրականացնում են փորձի փոխանակում, միջոցներ են մշակում դատավարության բնագավառում ազգային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, որոշում են Կողմերի պետությունների դատական համակարգերի փոխգործակցության ոլորտում համագործակցության զարգացման ուղղությունները:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը կարող են ամեն տարի ստեղծել համատեղ ծրագրերի մշակման և քրեական, քրեադատավարական, տնտեսական, քաղաքացիական, վարչական իրավունքների բնագավառում օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ համաձայնեցված թեմատիկայով հանձնաժողովներ: Այդ նպատակների համար Կողմերը կարող են հավասարության հիմունքներով ստեղծել օրինագծերի իրավական փորձաքննության մասնագետների խմբեր:

Հոդված 5

Կողմերը սույն Համաձայնագրի և «Օտարերկրյա իրավունքի մասին տեղեկատվության վերաբերյալ» Կոնվենցիայի դրույթների հիման վրա իրականացնում են իրենց պետությունների օրենսդրության և իրավական կառույցների մասին տեղեկատվության փոխանակում, ազգային իրավական համակարգերի իրազեկման բնագավառի մասնագետների փոխանակում, ինչպես նաև այդպիսի տեղեկություն պարունակող տեղեկատվական համակարգերի ստեղծում և էլեկտրոնային կապի հանրային կամ հատուկ ուղիներով դրանց մատչելիության կազմակերպում:

Հոդված 6

Համագործակցության գծով համատեղ միջոցառումները ֆինանսավորելիս Կողմերը եթե այլ կերպ չպայմանավորվեն, կհետևեն այն սկզբունքին, որի համաձայն իրականացվող միջոցառումների շրջանակներում կազմակերպական, իր տարածքում գտնվելու և տեղաշարժվելու ծախսերը կրում է ընդունող Կողմը, իսկ անցկացման վայր մեկնելու և վերադառնալու տրանսպորտային ծախսերը՝ ուղարկող Կողմը:

Հոդված 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագիրը կարող է գրավոր փոփոխվել և լրացվել: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է վերջինիս անբաժանելի մասը:

Սույն Համաձայնագրի գործողության ոլորտին առնչվող հարցերով Կողմերի միջև վեճերն ու տարաձայնությունները կլուծվեն երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամանակով:

Այն կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից և իր գործողությունը դադարեցնում է դադարեցման մասին ծանուցումը մյուս Կողմի ստանալուց վեց ամիս անցնելուց հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի մայիսի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի տեքստի մեկնաբանման հարցերում Կողմերն օգտագործելու են ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մայիսի 26-ից: